«Կրթություն առանց սահմանների» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը մայրենիի դասավանդման ընթացքում

Առարկան՝ Մայրենի

Հետազոտող ուսուցիչ՝ Սարգսյան Անուշ

Ղեկավար՝ Բաբաջանյան Վերոնիկա

Ուսումնական հաստատություն՝ Պ.Սևակի անվան թիվ 123 հիմնական դպրոց

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……..……3

ԳԼՈՒԽ 1. ԱՐԺԵՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1.1 Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման առանձնահատկությունները մայրենիի դասավանդման գործընթացում……....……5

1.2 Բարոյական արժեքները որպես սոցիալական զգացմունքների ձևավորման միջոց կրտսեր դպրոցական տարիքում……...……10

1.3 Գեղագիտական դաստիարակության հիմնահարցերը կրտսեր դպրոցում……...…….12

1.4 Հայրենասիրական դաստիարակության գործընթացում հայրենաճանաչողական խաղերի, մրցույթների, վիկտորինաների ներդրման անհրաժեշտությունը……...…16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……..……..……20

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……..……21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի արդիականությունը: Սովորողների դաստիարակության իրականացումը միշտ էլ եղել ու մնում է կրթության կարևորագույն խնդիրներից մեկը: Ճիշտ է, ժամանակակից արևմտյան կրթական մոտեցումներում դաստիարակության խնդիրը փոխարինվում է արժեքների ձևավորման խնդրով, բայց դրանից հարցի էությունը չի փոխվում: Սակայն այդ մոտեցումներում կտրուկ փոխվել են շեշտադրումները, որոնց առանցքը կազմում է կրթության նոր հարացույցը, ավտորիտար համակարգերին հատուկ գիտելիքի տիրապետմանն ուղղված կրթությանը գալիս է փոխարինելու ժողովրդավարական համակարգերին հատուկ՝ արժեքների ձևավորմանն ուղղված կրթությունը: Եթե ավտորիտար համակարգերում կարևորվում է գիտելիքը, որովհետև այն հնարավորություն է տալիս պատրաստելու պետության և հասարակության այս կամ այն խնդիրը, պահանջը իրականացնելուն ունակ մասնագետ, ապա ժողովրդավարական համակարգերում հիմնական արժեքը մարդն է, որի բարօրությունը համարվում է գերակա խնդիր: Եվ ադ բարօրությունը պայմանավորվում է մարդու արժեքների աշխարհով, արժեքային կողմնորոշումով:

Հետազոտական աշխատանքի արդիականությունը պայմանավորված է այն իրողությամբ, որ հանրակրթության առաջին փուլը՝ կրտսեր դպրոցը, թերևս, ավելի մեծ հնարավորություններ ունի նշված արժեքների ձևավորման համար: Այս տեսակետից նշենք, որ հանրակրթության մեջ բարոյական արժեքների ձևավորման դաշտը սովորաբար համարվում է հումանիտար առարկաների բնագավառը, այն հարուստ է այդ արժեքները կրող կոնկրետ կերպարներով, որոնք էլ ներգրավվում են համապատասխան արժեքների ձևավորման խնդրի լուծման մեջ: Մայրենին ունի սովորողների արժեքային համակարգի ձևավորմանն ուղղված կերպարային մոտեցման հնարավորություններ, հետևաբար բարոյական, գեղագիտական, հայրենասիրական արժեքների ձևավորման ուղղությամբ մայրենիի դասավանդման գործընթացում տարվող աշխատանքները կարող են նպաստել նմանատիպ արժեքներ սերմանելու համար:

Հետազոտական աշխատանքի նպատակը: Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել արժեքային համակարգի ձևավորումը մայրենիի դասավանդման գործընթացում:

Հետազոտական աշխատանքի խնդիրները: Հետազոտական նպատակով պայմանավորված՝ աշխատանքում առաջ են քաշվել և լուծվել հետևյալ խնդիրները.

1. ուսումնասիրել կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման առանձնահատկությունները մայրենիի դասավանդման գործընթացում,
2. ուսումնասիրել բարոյական արժեքները որպես սոցիալական զգացմունքների ձևավորման միջոց կրտսեր դպրոցական տարիքում,
3. ուսումնասիրել գեղագիտական դաստիարակության հիմնահարցերը կրտսեր դպրոցում,
4. ներկայացնել հայրենասիրական դաստիարակության գործընթացում հայրենաճանաչողական խաղերի, մրցույթների, վիկտորինաների ներդրման անհրաժեշտությունը,
5. հետազոտական արդյունքների հիման վրա կատարել եզրակացություններ:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը: Հետազոտական աշխատանքը կազմված է մեկ գլխից, որն ունի 4 ենթագլուխ, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1. ԱՐԺԵՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1.1 Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման առանձնահատկությունները մայրենիի դասավանդման գործընթացում

Մայրենիի ուսուցման ընթացքում կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի բովանդակային բաղադրատարրը բնութագրվում է հենց առարկայի առանձնահատկություններով: Մայրենիի դասավանդումը դիտարկվում է մի կողմից որպես մայրենի լեզվի ուսուցման գործընթաց, մյուս կողմից որպես գրականության ուսուցման գործընթաց, ուստի մենք դիտարկում ենք այն արժեքները, որոնք դրսևորվում են՝

- մայրենի լեզվի գործառույթներում,
- տարրական դպրոցում մայրենիի ուսուցման նպատակներում,
- մայրենիի առարկայական չափորոշիչներում:

Լեզվի հիմնական գործառույթներն են՝ հաղորդակցական, ճանաչողական, տեղեկատվական, արտահայտման, ներազդման, նշանակողական, տեղեկատվական, ազգային-մշակութային ավանդույթների պահպանման ու փոխանցման, մտքերի ձևավորման ու արտահայտման, էմոտիվ և այլն:

Հաղորդակցական (կոմունիկատիվ) գործառույթը ենթադրում է խոսքային հաղորդակցում: Տարրական ուսուցման համակարգում այս գործառույթի իրականացումը նշանակում է ուսումնական գործընթացի բովանդակության մեջ այնպիսի արժեքների դիտարկում, որոնք արտահայտվում են փոխադարձ շփման, բարեկիրթ հաղորդակցման ընթացքում: Շփման ու հաղորդակցման արժեքային կողմը բնութագրում է մարդու՝ այլոց հետ համակեցության, սոցիումում դրսևորվելու, մարդկանց հետ շփվելու պահանջմունքը: Այս պարագայում հատուկ նշանակություն է ձեռք բերում խոսքային հաղորդակցման մշակույթը, լեզվական միջոցներով զրուցակցի վրա ներգործելու ունակությունը: Հաղորդակցական կարողությունը արտահայտվում է նրանով, որ կրտսեր դպրոցականը կարողանա լսել, ընկալել, բանավիճել, համարժեք վերաբերմունք

դրսևորել, տրամաբանված խոսք կառուցել: Ըստ Ս.Տ. Մասլովի՝ շփման ու հաղորդակցման արժեքները վերաբերում են արժեքների սոցիալական խմբին[1]:

Քաղաքավարությունը, բարությունը ու բարեկրթությունը՝ որպես արժեքային հասկացություններ, բնութագրում են անձի՝ շրջապատող մարդկանց նկատմամբ հարգանքի վրա հիմնված հարաբերություններ ձևավորելու ձգտումը: Այս հատկանիշը թույլ է տալիս դրանք ներառել բարոյական արժեքների խմբում:

Տեղեկատվական գործառույթի տեսանկյունից լեզուն դիտարկվում է որպես հաղորդման միջոց. այն մարդկության փորձի ու իմացության, գիտակցված գործունեության ընթացքում կուտակված գիտելիքների համակարգման ու լեզվական ձևակերպման միջոց է: Այդ գործառույթը ուսումնական գործընթացի բովանդակության մեջ բացահայտում է իմացական արժեքները (գիտելիքներ, ճանաչողություն): Գիտելիքը հասարակական փորձով ստուգված և իրականության տրամաբանական յուրացման արդյունքն է, որը համարժեք է մարդու գիտակցության մեջ այդ իրականության արտացոլմանը:

Ազգային-մշակութային ավանդույթների պահպանման ու փոխանցման գործառույթն իրականացնում է ժամանակների միջև կապը, որը հնարավորություն է ընձեռում լեզվի մեջ պահպանել ազգային մշակույթը և փոխանցել սերնդեսերունդ: Այն դրսևորվում է սոցիալական (ազգ, ժողովուրդ, ազգային մշակույթ, հայրենիք, մայրենի), իմացական (ազգային մշակույթի, պատմության վերաբերյալ գիտելիքներ), գեղագիտական (աշխարհընկալումը՝ արտահայտված բառերով, պատկերի գեղագիտություն ու ներդաշնակություն) արժեքների ձևով:

Ազգային արժեքներին հաղորդակցվելը նախնիների ավանդույթները պահպանելու, շարունակելու, դրանց հավատարիմ մնալու համոզմունք է, սեր դեպի հայրենի բնօրրանը: Անձի համակողմանի ու ներդաշնակ ձևավորման կարևոր նախապայման է այն ըմբռնումը, որ ազգային մշակույթը ժողովրդի պատմական հիշողության մեջ հազարամյակների ընթացքում խտացած արժեքների շտեմարան է:

[1] Маслов С.И., Эмоционально-ценностное образование младших школьников /С.И. Маслов.-Тула, Изд-во ТГПУ им. Л.Н. Толстого, 1999. с. 20.

Ազգային մշակույթը, որն արտացոլվում է լեզվում, արտահայտում է լեզվի հարստությունը, պատկերավորումն ու արտահայտչությունը, գեղեցկությունը: Գեղեցիկը, ըստ Ս.Ի. Օժեգովի, մարմնավորում է այն ամենը, ինչը գեղագիտական վայելք է պարգևում[2]: Գեղագիտական օրենքներին համապատասխանությունը դրսևորվում է ներդաշնակության մեջ. լեզվում ներդաշնակությունն արտահայտվում է գրականության, հատկապես բանահյուսության մեջ:

Լեզվի շփման գործառույթը ենթադրում է համամարդկային մշակույթի յուրացում հատկապես գեղարվեստական ստեղծագործությունների թարգմանությունների միջոցով: Այն ընդլայնում է արժեքների սահմանները՝ սոցիալական (հանուր մարդկության արժեքները), իմացական (գիտելիքը՝ որպես համամարդկային մշակույթի արտահայտություն), գեղագիտական (աշխարհում գեղեցկությունն ու ներդաշնակությունը, խոսքի գեղագիտությունն ու մշակույթը՝ որպես արժեք):

Լեզվի հուզական գործառույթը կապված է հույզերի ու զգացմունքների արտահայտման հետ: Առավելագույն հուզական ներգործության հնարավորություններով են օժտված գեղարվեստական կերպարները:

Հուզական գործառույթը կարևոր դեր ունի նաև առօրյա շփումներում: Այն նպատակաուղղված է բարոյական (հուզական արձագանքը՝ որպես արժեք) և գեղագիտական (գեղեցիկի զգացումը՝ որպես արժեք) արժեքներին հաղորդակցմանը:

Խոսքային ներգործության գործառույթը ենթադրում է որևէ մեկին որոշակի արարքի մղելու խնդրանք, հորդոր, հրաման, դրդում, այսինքն՝ արտահայտում է խոսողի կամային վերաբերմունքը: Այս գործառույթը ենթադրում է այն, որ սոցիալական միջավայրը ըմբռնվում է որպես արժեք:

Մտքերի ձևակերպման և արտահայտման գործառույթը նշանակում է, որ ցանկացած միտք հնչյունային թաղանթ և արտահայտություն է ստանում: Այս գործառույթի իրականացումը ենթադրում է իմացական (մտածողությունը, մտքերը ձևակերպելու և արտահայտելու կարողությունը՝ որպես արժեք) և գեղագիտական

[2] Ожегов С.И., Толковый словарь русского языка /С.И. Ожегов, Н.Ю. Шведова /РАН, Ин-та русского языка им. В.В. Втноградова.-М.: Азбуковник, 1999. с. 304.

(մտքերի գեղեցիկ և ներդաշնակ ձևակերպումը՝ որպես արժեք) արժեքներին հաղորդակցում:

Լեզվի կարգավորիչ գործառույթը դրսևորվում է անձի վարքում: Այն արտահայտում է նախատեսվող գործողությունների հաջորդական իրականացումը, մարդկային փոխհարաբերությունների, կենցաղի և բարոյական հարաբերությունների կազմակերպումն ու կարգավորումը և նպաստում է բարոյական արժեքների յուրացմանը:

Մայրենի լեզվի դասավանդման գործընթացում, ըստ Վ.Ս. Լեդնևի, առանձնացվում՝ հաղորդակցական գեղագիտական կողմը ընթերցանության համար նախատեսված գեղարվեստական տեքստերի հիման վրա[3]: Այսպես, օրինակ, մայրենիի դասը ինտեգրվում է գեղարվեստական ընթերցանության դասի հետ՝ ուսումնական ձեռնարկներում գեղարվեստական տեքստերի ներմուծմամբ: Կրտսեր դպրոցականների պատկերավոր մտածողության և հուզական ընկալման շնորհիվ գեղարվեստական տեքստերի բովանդակության ներգործությունը կրտսեր դպրոցականի ներաշխարհի վրա պետք է համարժեք լինի քերականական առաջադրանքների կատարմանը, մանավանդ որ առաջադրանքները բխում են տեքստերի բովանդակությունից:

Կրտսեր դպրոցում մայրենի գործառույթներին առարկայի ուսուցման նպատակների համապատասխանությունը իր արտացոլումն է գտնում կրթության բովանդակությանը ներկայացվող պահանջներում: Կրտսեր դպրոցում մայրենիի ուսուցումն ուղղված է հետևյալ հիմնական նպատակների իրականացմանը՝

1. կրտսեր դպրոցականների իմացական զարգացում. մայրենիի վերաբերյալ գիտելիքների և ունակությունների, դրանց օրինաչափությունների ու փաստերի վերլուծության և ընդհանրացման փորձի ձևավորումը: Այդ նպատակի իրականացումը նպաստում է առաջին հերթին իմացական արժեքների ձևավորմանը (լեզվի իմացություն և լեզվի մասին գիտելիքներ),

2. կրտսեր դպրոցականների խոսքի զարգացում նրանց մեջ խոսքային գործունեության հիմնական տեսակների ձևավորում խոսքային հաղորդակցման

[3] Леднев В.С., Содержание общего среднего образования. Проблемы структуры /В.С. Леднев.-М.: Педагогика, 1980. с. 41.

մշակույթի դաստիարակում, որն ըմբռնվում է իբրև երեխաների հաղորդակցումը սոցիալական արժեքներին,

3. կրտսեր դպրոցականների գեղագիտական ճաշակի ձևավորում. լեզվի ուսուցումը զուգորդվում է գեղագիտական արժեքների յուրացմանը,

4. սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացում, որը նպաստում է նրանց մեջ իմացական «սոցիալական», «գեղագիտական», «բարոյական» արժեքների ձևավորմանը:

Ուսուցվող լեզվական նյութի յուրացումը ենթադրում է խոսքային գործունեության ու լեզվի մշակույթի տիրապետման ընթացքում համադրել իմացական և սոցիալական արժեքները: Մայրենիի ուսուցման գործընթացում յուրացվում են և ձևավորվում հետևյալ արժեքները՝

ա) գեղագիտական արժեքների ոլորտում՝

- գեղագիտական պահանջմունքներ, զգացմունքներ, հույզեր և ապրումներ,
- գեղագիտական ընկալում, զարգացում և ճաշակ,
- գեղեցիկը, վեհը և կատակերգականը:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի գեղագիտական արժեքների հետ մայրենիի ուսուցման գործընթացի կապը: Այս իրողություններն առավել ցայտուն են դրսևորվում կրտսեր դպրոցում: Հաղթահարման ճանապարհներից մեկն ուսուցման գործընթացում գեղագիտական արժեքների ներառումն է: Գեղեցիկի առկայությունը թույլ է տալիս սովորողին դրսևորելու նաև տոկունություն, հետևողականություն, նպատակասլացություն և կամային այլ հատկանիշներ:

բ) բարոյական արժեքների ոլորտում՝

- մարդկանց հետ փոխհարաբերությունների, շրջակա միջավայրում կատարվող երևույթների, իրադարձությունների համարժեք ընկալում,
- բարու, սիրո, արդարության և բարոյական այլ արժեքների ձևավորում:

Լեզվի պարագայում արժեքների դրսևորումը կարող է իրականացվել գրական ստեղծագործությունների (առանձնապես՝ հեքիաթների) հերոսների վարքագծի միջոցով, որոնց բովանդակության մեջ պետք է ներառվեն արժեքների հետևյալ խմբերը՝ իմացական, սոցիալական, գեղագիտական, բարոյական:

1.2 Բարոյական արժեքները որպես սոցիալական զգացմունքների ձևավորման միջոց կրտսեր դպրոցական տարիքում

Կրտսեր դպրոցական տարիքի երեխան նման է ամբողջական մի զգայարանի. ընկալում և զգում է ամեն մանրուք, միշտ պատրաստ է արձագանքելու և հուզականությամբ մասնակցելու շրջապատում տեղի ունեցող իրադարձություններին: Երեխան շրջապատող աշխարհն ընկալում է տպավորությունների և կերպարների միջոցով, որոնք խոր հետք են թողնում երեխայի կյանքում և երբեք չեն մոռացվում, ուստի շատ կարևոր է հենց կրտսեր դպրոցական տարիքից նպաստել երեխաների բարոյական դաստիարակությանը և սոցիալական զգացմունքների զարգացմանը:

Բարոյական դաստիարակության հարցը մշտապես հետաքրքրել է մանկավարժ-տեսաբաններին, որոնք փորձել են խմբավորել խնդիրները բարոյական դաստիարակության նպատակին հասնելու իրենց տրամաբանությամբ: Բարոյական դաստիարակության խնդիրները իրականացվում են որոշակի տրամաբանությամբ և բաժանվում են երեք խմբի հետևյալ հաջորդականությամբ[4].

- բարոյական գիտակցության զարգացման խնդիրներ,
- բարոյական վարքագծի ձևավորման խնդիրներ,
- բարոյական զգացմունքների և հարաբերությունների հաստատման խնդիրներ:

Բարոյական դաստիարակությունը երեխային համամարդկային և սոցիալական արժեքներին հաղորդակից դարձնելու նպատակաուղղված գործընթաց է: Այն կազմակերպվում և ղեկավարվում է մեծահասակների կողմից: Կրտսեր դպրոցական տարիքում երեխան չափազանց զգայուն է ցանկացած ներգործության նկատմամբ, նա սպունգի նման ընկալում է սոցիալական միջավայրի ներգործությունը և, ընդօրինակելով մեծահասակներին, փորձում է համապատասխանել մարդկային կենսակերպին բնորոշ չափանիշներին, դրսևորումներին:

Արտաքին աշխարհի հանդեպ երեխայի դիրքորոշումն իրենից ներկայացնում է բարոյական զգացմունքների և պատկերացումների, բարոյական սովորությունների և վարքագծի ամբողջություն, որն ամփոփ ձևով կարելի է բնութագրել իբրև բարոյական կամ

[4] Лисина М.И., Обшение, личность и психика ребенка. Под редакцией Рузской А. Г. М.: Институт практической психологи. Воронеж: Модэк. 1997. с. 161.

բարոյականության որակ: Փաստորեն, բարոյական որակը համալիր բարոյական հատկություն է, այն արդյունք է զարգացած բարոյական գիտակցության:

Բարոյական գիտակցության հետ մեկտեղ բարոյական դաստիարակության ընթացքում ձևավորվում են անձնային կարևորագույն արժեքներ, որոնք դաստիարակվում են բարոյական գիտակցությունից անկախ և վեր են ածվում սոցիալական զգացմունքների: Այդպիսի հատկություններից են, օրինակ, բարությունը, մարդասիրությունը, աշխատասիրությունը, ընկերասիրությունը, հայրենասիրությունը, մաքրասիրությունը: Աստիճանաբար երեխայի կողմից գիտակցվում և արժևորվում են նաև նշված զգացմունքներ, որոնք համալրում են նրա բարոյական որակը: Բարոյական դաստիարակության երկու կողմերն էլ ենթադրում են մանկավարժի ակտիվ մասնակցություն և աջակցում: Մանկավարժը բարոյական դաստիարակության ընթացքում հանդես է գալիս «սոցիալական ուղեկցողի» դերում:

Բարոյական դաստիարակությունն իրականացվում է որոշակի միջոցներով: Կրտսեր դպրոցական տարիքում արդյունավետությամբ կիրառվում են գեղարվեստական միջոցները, որոնք նպաստում են երեխայի բարոյականության զարգացմանը գեղագիտական շեշտադրումներով: Գեղարվեստական միջոցներից հարկ է հատուկ առանձնացնել **մանկական գեղարվեստական գրականությունը**: Հեքիաթների և առակների հերոսների գործողությունները մեծ հուզականությամբ են ընկալվում երեխաների կողմից և խորը հետք թողնում նրանց բարոյական զգացմունքների և պատկերացումների վրա: Հեքիաթների, պատմվածքների հերոսական կերպարները ընդօրինակման արժանի բարոյական նմուշներ են, որոնցից որպես օրինակ կարող ենք առանձնացնել 3-րդ դասարանի դասագրքից Երվանդ Պետրոսյանի «Թագավորն ու գյուղացին» հեքիաթը[5]: Չափածո հեքիաթը զույգերով կարդում են դասարանում, որից հետո ուսուցիչը հարցեր է տալիս.

- Ձեր կարծիքով ի՞նչ որոշում կկայացնի թագավորը,

[5] Մայրենի 3: Հանրակրթական դպրոցի 3-րդ դասարանի դասագիրք: Մաս 2:/ Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Ջիլավյան Ե., / - Եր.: «Մանմար», 2021, էջ 109:

- Վերընթերցենք հեքիաթի «Քնով ընկար՝ ունեցածդ կգողանան, բա չգիտե՞ս» տողերը: Արտահայտեք ձեր վերաբերմունքը գողերի, թագավորի և գյուղացու նկատմամբ:

Այս հարցերը ստիպում են աշակերտներին մտածել՝ ինչպես կվարվեին իրենք այդ իրավիճակում, և ձևավորում է պատասխանատվության ու պարտքի զգացում:

Բարոյական դաստիարակության ընթացքում անգնահատելի է նաև **բնության դերը**, բնության հետ շփման ընթացքում ստացած դրական հուզական լիցքավորումը: Բարոյական դաստիարակության միջոց է երեխայի ինքնուրույն գործունեությունը՝ խաղային, աշխատանքային, կերպարվեստային, կառուցողական և ուսումնական[6]:

Բարոյականության հզոր միջոց է **երեխային շրջապատող մթնոլորտը**, այն սոցիալական միջավայրը, ուր երեխան ապրում և մեծանում է: Սիրո և փոխադարձ հարգանքի հիմունքներով կառուցված բարյացակամ մթնոլորտը, ընկերական փոխվստահելի հարաբերությունները խթանում են բարոյական դաստիարակության գործընթացը և նպաստում սոցիալական զգացմունքների զարգացմանը: Բարոյական որակների ձևավորման ընթացքում երեխան ձեռք է բերում երեք կարևորագույն հատկանիշ՝ բարոյական գիտակցություն, բարոյական վերաբերմունք արտաքին աշխարհի նկատմամբ և բարոյական վարքագիծ: Նշված հատկանիշներն օգնում են կառուցել արժևորված հարաբերությունների համակարգ՝ բարոյականության սկզբունքներով՝ ուղղված սոցիալական զգացմունքների ձևավորմանը:

1.3 Գեղագիտական դաստիարակության հիմնահարցերը կրտսեր դպրոցում

Գեղագիտական դաստիարակությունը նպատակաուղղված գործընթաց է, որը ենթադրում է շրջակա միջավայրի գեղագիտական ընկալման և գեղեցիկի ստեղծման ունակությունների զարգացում, անձի հուզազգացմունքային և արժեքային գիտակցության և դրան համապատասխան գործունեության ձևավորում: Գեղեցիկը ճանաչելու, հասկանալու, զգալու, ինչպես նաև գեղագիտական այլ ունակությունների նախադրյալները մարդուն տրվում են ժառանգաբար: Դրանց ձևավորումը և զարգացումը

[6] Թոփուզյան Ա., Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրները մանկավարժության մեջ: Երևան: «Լինգվա»: 2009թ.: էջ 128:

հիմնականում իրականացվում են սոցիալական ամենատարբեր ինստիտուտներում, որոնցից են ընտանիքը, դպրոցը, երեխաների զարգացման կենտրոնները, արվեստի դպրոցները, սոցիալ-կրթական, մշակութային հաստատությունները և այլն, որոնց ազդեցության արդյունքում փոփոխվում է երեխայի մտածողությունը, նա ճանաչում է աշխարհը, ձևավորվում է գեղագիտական ճաշակ, ընդլայնվում է երեխաների գեղագիտական զարգացման սահմանները՝ ընդգրկելով նաև իրականության բոլոր կողմերը՝ բնությունը, ընտանեկան, դպրոցական միջավայրը, աշխատանքային գործունեությունը, ստեղծված իրավիճակները, հասարակական կյանքը և այլն:

Ծնողների մեծամասնությունը գեղագիտական դաստիարակության ուղղությամբ առանձնապես աշխատանքներ չի իրականացնում, հետևողական չէ իր երեխայի երաժշտական, նկարչական և այլ ընդունակությունների, ստեղծագործական կարողությունների բացահայտման և զարգացման գործում:

Ծնողները և դասվարները կարծում են, որ կրտսեր դպրոցականի գեղագիտական դաստիարակության ճիշտ, նպատակասլաց կազմակերպումը, ղեկավարումն ու խթանումը հիմնականում պետք է իրագործվի ուսուցիչների միջոցով[7]: Իրենց դերակատարությանն ավելի քիչ կարևորություն են տալիս ծնողները, մինչդեռ ուսուցիչները կարևորում են և՛ ծնողների, և՛ շրջապատի ու ընկերների, և՛ հասարակության դերը: Ծնողներն ընդհանրապես չեն կարևորում հասարակության դերը: Նրանք կարևորում են շրջապատող միջավայրի դերը: Սա թերևս կարելի է համարել գեղագիտական դաստիարակության իրականացման համար կարևոր նշանակություն ունեցող հիմնահարցերից մեկը, առավել ևս այսօր, երբ տարբեր պատճառներով պայմանավորված՝ ընտանիքը դժվարանում է իրականացնել իր հիմնական դաստիարակչական գործառույթը: Ոչ պակաս դերակատարություն ունի նաև հասարակությունը՝ իր կողմից ներկայացվող հասարակական պահանջի տեսանկյունից:

Հաջորդ հիմնահարցն այն բացթողումներն են, որոնք մեզ հայտնի պատճառներով առկա են հանրակրթության համակարգում՝ մասնավորապես կրտսեր դպրոցում:

---

[7] Հակոբյան Ն. Հ. Աշակերտների գեղագիտական դաստիարա-կությունը դպրոցում: Երևան: «Լույս» հրատարակչություն: 1986: էջ 78:

Անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ կոլեկտիվ գեղագիտական գործունեությանն ուղղված աշխատանքներին կրտսեր դպրոցում, որը նույնպես ոչ պակաս կարևորություն ունեցող հիմնահարց է գեղագիտական դաստիարակության իրականացման տեսանկյունից: Դրանք կարող են լինել արհեստների, ծեսերի և ծիսակատարությունների, ժողովրդական բանահյուսության արժեքների հետ ծանոթացումը, առանձին միջոցառումների կազմակերպումը, որոնք գեղագիտական արժեքների ձևավորման նախադրյալներ են: «Գեղագիտական արժեքները մարդու վրա թողնում են հոգեֆիզիկական, իմացական և բարոյական ազդեցություն, դրանով իսկ միահյուսվում են մտավոր, աշխատանքային, ֆիզիկական և բարոյական դաստիարակության հետ»[8]: Ինչպես գրում է Պ. Լեսգաֆտը, «Զարգացումը պետք է ներդաշնակ լինի, ինչպես ֆիզիկականը, այնպես էլ դրան համապատասխան մտավորը, էսթետիկականը, բարոյականը»[9]:



Մայրենիի 4-րդ դասարանի դասագիրքը հարուստ նյութ է բովանդակում գեղագիտական արժեքների զարգացման տեսանկյունից: Բերենք այդպիսի մեկ օրինակ: Մարտիրոս Սարյան թեման ուսուցանելիս ուսուցիչը որոշակի տեղեկություններ է ներկայացնում նրա կենսագրությունից, իսկ էլեկտրոնային գրատախտակի միջոցով ցուցադրում է Սարյանի կտավներից:



[8] Ղույումչյան Գ. Ե., Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք 1: Եր.: «Զանգակ -97»: 2005: էջ 221:

[9] Մանուկյան Ս.Պ., Ընդհանուր մանկավարժագիտություն: Նոր դասընթաց: Ուսումնական ձեռնարկ:- Երկրորդ բարեփոխված հրատարակություն: Եր.: «Զանգակ -97»: 2005: էջ 86:

Սարյանական կտավների հայկականությունն ու գունապնակը մեծ ազդեցություն կարող է ունենալ կրտսեր դպրոցականների գեղագիտական արժեքների ձևավորման վրա:

Այսպիսով, կրտսեր դպրոցականի գեղագիտական դաստիարակության ոլորտում առկա հիմնահարցերի ուսումնասիրությունների արդյունքում կարելի է նախանշել այն գործընթացները, որոնք կարող են նպաստել կրտսեր դպրոցականի համակողմանի և ներդաշնակ զարգացմանը՝ ձևավորելով իրականության նկատմամբ որոշակի հարաբերություններ: Այդ գործընթացներն են.

- Ընդունելով այն գաղափարը, որ ուսուցման ընթացքում դպրոցականը դաստիարակվում է, կարծում ենք, դաստիարակության գործընթացին վերաբերող աշխատանքներ պետք է մշտապես իրականացնել ուսուցման ընթացքում և յուրաքանչյուր դասի կոնկրետ նպատակներից մեկը ձևակերպել սովորողների դաստիարակության տեսանկյունից՝ առաջադրելով խնդիրներ:
- Ծնողների հետ պարբերաբար անցկացնել խորհրդատվություններ, զրույցներ, կազմակերպել հանդիպումներ գեղագիտական դաստիարակության հետ կապված խնդիրների, դրանց հնարավոր լուծումների վերաբերյալ:
- Գեղագիտական դաստիարակության իրականացման նպատակով օգտվել համացանցից և կազմակերպել այցելություններ թանգարաններ, պատմամշակութային վայրեր, դիտել արվեստի ներկայացուցիչներին վերաբերող հաղորդումներ, մասնակցել խմբային քննարկումների, դիտել արվեստի ստեղծագործություններ, լսել երաժշտական կատարումներ և այլն:
- Սովորողներին ակտիվորեն ներգրավել ինքնակրթության, ինքնազարգացման գործընթացներին, ըստ անհրաժեշտության՝ տալ հանձնարարականներ, աշխատել ծնողների հետ:

Այս աշխատանքների իրականացման անհրաժեշտությունը բխում է ստեղծված իրավիճակից, դաստիարակության նպատակի հասարակական-պետական նշանակությունից, գեղագիտական դաստիարակության իրականացման հնարավորություններից՝ առաջնորդվելով այն գաղափարով, որ «Գեղեցիկը կփրկի աշխարհը»:

1.4 Հայրենասիրական դաստիարակության գործընթացում հայրենաճանաչողական խաղերի, մրցույթների, վիկտորինաների ներդրման անհրաժեշտությունը

Հայրենասիրությունը սկսվում է հայրենաճանաչությունից: Հայրենաճանաչողության գործընթացը երկարատև մի գործընթաց է, որտեղ սովորողը, սկսած նախադպրոցական ուսումնական հաստատություններից մինչև բուհական և հետբուհական ուսումնական հաստատություններ, իր վրա է կրում իրեն սովորեցնողի, դաստիարակի պատկերացումները հայրենիքի և հայրենասիրության վերաբերյալ:

Հայրենասիրության վերաբերյալ համապատասխան գիտելիքների և այդ գիտելիքները գործնականում վարքագծային դրսևորումների ձևավորման, ամրապնդման համար մենք առաջարկում ենք ներդնել այնպիսի միջոցառումներ, որոնք գործնականում կապահովեն այդ ամենը:



Կրտսեր դպրոցում գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման ու ամրապնդման գործընթացում առանցքային դեր ունի խաղը: **Խաղը, վարժանքները, վիկտորինաները, մրցումներն ու մրցույթները** այս համատեքստում սովորողների մոտ մոտիվացիայի աղբյուր կարող են հանդիսանալ, միաժամանակ նպաստել հայրենաճանաչությանը և հայրենասիրական դրսևորումներին: Մայրենիի 4-րդ դասարանի դասագիրքը, հատկապես՝ «Հայաստանի յոթ և բյուր հրաշալիքները» բաժինը՝ նվիրված հայոց աշխարհի հրաշալիքներին, հարուստ է հայրենիքի մասին տարբեր գեղարվեստական ստեղծագործություններով և պատումներով[10], որը հնարավորություն է տալիս կրտսեր դպրոցականների մոտ սեր սերմանել առ հայրենին: Ուստի հայրենասիրական թեմաներով դասերը կարելի է կառուցել նշված մեթոդների զուգակցմամբ և դասերը անցկացնել ավելի հետաքրքիր մթնոլորտում: Սակայն նախ և առաջ պետք է հասկանալ, թե ինչպես և որ դեպքում կարելի է օգտվել վերոբերյալ մեթոդներից:

[10] Մայրենի 4: Հանրակրթական դպրոցի 4-րդ դասարանի դասագիրք: Մաս 1:/ Թորոսյան Կ., Սարգսյան Վ., Խաչատրյան Հ., Չիբուխչյան Կ., / - Եր.: «Մանմար», 2022:

Առողջ մրցակցության պարագայում խաղը շատ ավելի արդյունավետ մեթոդ է: **Խաղը՝** որպես ակտիվ ուսուցման կազմակերպման ձև, մոտիվացնում և ավելի ակտիվ է դարձնում սովորողներին: Խաղի միջոցով կարելի է լուծել ուսումնադաստիարակչական բազում խնդիրներ կրթության տարբեր մակարդակներում: Այստեղ խաղը պետք է դիտվի իբրև ուսումնադաստիարակչական աշխատանքների նպատակներին հասնելու միջոց: Խաղը սովորողների համար հնարավորություն է ստեղծում հանդես գալու ինքնուրույն կամ իր վրա վերցնելու թիմի մասնակիցների նկատմամբ որոշակի պատասխանատվություն: Անհամարձակ սովորողները խաղի ընթացքում ավելի վճռական են հանդես գալիս, ազատ են իրենց մտքերի և գործողությունների մեջ, որպես թիմի անդամ՝ կայացնում են այնպիսի որոշումներ, որոնք բխում են թիմի շահից:

Ինչպես նշում է Ս. Ա. Մովսիսյանը, «Գործունեության դերը վճռական է աշակերտի անձնավորության ձևավորման մեջ, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ նա գործունեության հիմնական տեսակները՝ ուսումը, աշխատանքը, շփումը, խաղը, սպորտը և տարբեր տեսակի ինքնագործունեություններ, տեղի են ունենում սոցիալական կապերի և փոխազդեցությունների համակարգում: Գործունեության պրոցեսում են առաջ գալիս նրա նոր պահանջմունքները՝ որպես ակտիվության և զարգացման աղբյուր: Գործունեության ընթացքում աշակերտը ներգրավվում է հասարակական օբյեկտիվ հարաբերությունների համակարգում, որոնք որոշում են նրա վարքը, խթանում որոշակի հատկությունների զարգացում[11]: Խաղի ընթացքում սովորողները մշակում են որոշակի ռազմավարություններ, ապա այն իրականացնելու ծրագիր: Մեծանում է սովորողի՝ թիմին ծառայելու օգտակար գործողության գործակիցը: Առանձին դեպքերում լսում է ուրիշի կարծիքը, մաս դառնում որոշումների կայացմանը կամ ստանձնում դրա նախաձեռնողականությունը: Բացի դրանից՝ սովորողները սովորում են՝

- լսել ուսուցչի հրահանգները կամ խաղի կանոնները,
- պահպանել խաղի կանոնները, կարևորել դրանք,
- առաջադրված խնդիրների լուծման համար գտնել լուծումներ:

[11] Մովսիսյան Ս. Ա. Սոցիալական միջավայրի դաստիարակչական ազդեցության կառավարումը: Երևան: «Լույս» հրատարակչություն: 1976: էջ 24:

Ապացուցված է, որ երբ ուսուցման գործընթացը կառուցված է խաղային ձևով, սովորողների հարմարվողականությունն արագ է ընթանում և այն թույլ է տալիս սովորողին ցուցաբերել սեփական հնարավորություններին համարժեք արժանապատիվ արդյունքներ: Անհատապես կամ թիմով հաղթելու ձգտումը ավելի արդյունավետ է դարձնում սովորողների գործողությունները: Ներդասարանային, ներդպրոցական հայրենաճանաչողական խաղ-մրցույթներից զատ՝ խիստ անհարժեշտ է կազմակերպել և իրականացնել քաղաքային, մարզային և հանրապետական մրցույթներ: Արդար գնահատումը վերոբերյալ գործողությունների հաջողության գրավականն է: Գնահատումը ամենակարևոր բաղադրիչներից մեկն է:

Հայրենաճանաչողական խաղերը միտված պիտի լինեն սովորողներին հաղորդելու տեղեկատվություն.

- Հայաստան աշխարհի,
- ազգային խորհրդանիշների,
- անվանի հայորդիների,
- պատմական տարբեր ժամանակներում, տնտեսական, ռազմական, մշակութային ձեռքբերումների,
- մշակութային արժեքների,
- ամենատարբեր ոլորտներում հաջողության հասած հայորդիների,
- ազգային հերոսների,
- պատմական դեմքերի, անվանի զինվորականների,
- ճակատամարտերի,
- տեղանունների,
- ազգային ավանդույթների մասին:

Առանձնակի ուշադրության են արժանի ոչ միայն համապատասխան տեղեկատվության իմացությունը, այլև դրանց մասին տեղեկատվության մեկնաբանման և հաղորդման հայեցի արտահայտչաձևը: Առանձին եզրույթների՝ հայրենիք, հայրենասի-րություն, ձեռքբերում, ազգային արժեք, արդարություն և այլն, ճիշտ և բովանդակալից մեկնաբանումը պետք է դիտել որպես գնահատման առանձին բաղադրիչ:

Հայրենաճանաչողական խաղերի, մրցույթների, վիկտորինաների կազմակերպման ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այնպիսի գործոնների, ինչպիսիք են՝

- կանոնների մատչելիությունը,
- գնահատման համակարգի անաչառությունը,
- սովորողների հավասար մասնակցության հնարավորությունը,
- միմյանց լսելու կարողությունը,
- բանավիճելու կանոնների պահպանումը,
- հայեցի արտահայտչաձևը,
- հաղթանակը կամ պարտությունը ընդունելու փաստին համակերպվելը:

Գաղտնիք չէ, որ խաղը մեծ տեղ է գրավում սովորողների կյանքում: Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ անչափահասների մեծ մասը իրենց օրը անց է կացնում խաղեր (հատկապես համակարգչային) խաղալու վրա: Առաջինը լինելու, հաղթելու, հաղթահարելու, ռազմավարություններ մշակելու ձգտումը բոլոր տարիքում էլ մոտիվացիայի աղբյուր է. հետևաբար այդ ձգտման ճիշտ կառավարումը ուսումնադաստիարակչական և հատկապես սովորողների հայրենաճանաչողական և աշխարհընկալման գործընթացի կարևոր բաղադրիչներից մեկն է:

Սոցիալական ակտիվությունն անձնավորության անհրաժեշտ հատկությունն է, որն արտահայտվում է բուռն գործունեության տարբեր ձևերով՝ աշխատանքի, խաղերի, ուսումնական, սպորտային և հասարակական գործունեության մեջ: Սոցիալական ակտիվությունն ուղղված է շրջապատող աշխարհի վերափոխմանը և սեփական անձնավորության ձևավորմանը[12]:

Այսպիսով, սովորողների հայրենասիրական դաստիարակության գործընթացն արդյունավետ կազմակերպելու նպատակով մեր կողմից առաջարկած թեմատիկայով խաղերի, վիկտորինաների, մրցումների և մրցույթների ներդրումը կմեծացնի սովորողների հետաքրքրվածությունը շրջապատի, հայրենիքի և հայրենասիրության մասին:

[12] Ղույումչյան Գ. Ե. Մանկավարժություն: Գիրք 1: Երևան: «Զանգակ-97» հարտարակչություն: 2005: էջ 110:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից մանկավարժության կարևոր պահանջներից է երեխաների արժեքային համակարգի ձևավորումը: Կրթության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է, այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը: Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել: Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: Մեզանում արժեքային կրթության նկատմամբ ավանդաբար ընդունված է հետևյալ մոտեցումը. դպրոցն ու ծնողները փորձում են բարոյական ժառանգությունը փոխանցել նոր սերնդին՝ նրանց մեջ լավ արժեքներ սերմանելով և հաստատելով բարոյական այլևայլ հատկանիշների ճշմարտացիությունը: Արժեքային կրթության նոր՝ արևմտյան մանկավարժության մեջ մշակված մոտեցման հիմքում մտածական հմտությունների ձևավորման սկզբունքն է, ըստ որի՝աշակերտներին պետք է օգնել իմաստավորելու որոշակի արժեքներ, այսինքն՝ նրանց պետք է խրախուսել սեփական կենսափորձի և զանազան հարցադրումների միջոցով որոշել, թե իրենք ինչպիսի մարդ են ուզում դառնալ, ինչպիսի ավանդույթներ արժե պահպանել:

Արժեքները երեխաներին ներկայացվում են առաջին հերթին գրական, պատմական հերոսների օրինակով, նաև ուսուցչի վարքագծով: Ուստի շատ կարևոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել դասագրքերի նյութերին, ինչպես նաև ներկայացված հերոսների վարքագծի վերլուծությանը և դրա միջոցով որոշակի արժեքների բացահայտմանը: Սակայն վերլուծությունը ենթադրում է առաջին հերթին երեխաների գործուն մասնակցություն, այսինքն՝ աշակերտները պետք է հնարավորություն ունենան ազատորեն արտահայտելու իրենց կարծիքը, զգացմունքները, որոշակի հարցադրումներ անելու, ընկերների հետ քննարկելու, դատողություններ անելու հերոսների վարքագծի մասին, գնահատելու և իրենց համար բացահայտելու այս կամ այն արժեքը: Կրտսեր դպրոցական տարիքում գեղագիտական, բարոյական արժեքների և հայրենիքի նկատմամբ սիրո սերմանումը կարող է իրականացվել խաղերի, վարժանքների, վիկտորինաների, մրցումների ու մրցույթների միջոցով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Թոփուզյան Ա., Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրները մանկավարժության մեջ: Երևան: «Լինգվա»: 2009:
2. Հակոբյան Ն. Հ. Աշակերտների գեղագիտական դաստիարակությունը դպրոցում: Երևան: «Լույս» հրատարակչություն: 1986:
3. Ղույումչյան Գ. Ե. Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք 1: Եր.: «Զանգակ -97»: 2005:
4. Մայրենի 3: Հանրակրթական դպրոցի 3-րդ դասարանի դասագիրք: Մաս 2:/ Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Ջիլավյան Ե., / - Եր.: «Մանմար», 2021:
5. Մայրենի 4: Հանրակրթական դպրոցի 4-րդ դասարանի դասագիրք: Մաս 1:/ Թորոսյան Կ., Սարգսյան Վ., Խաչատրյան Հ., Չիբուխչյան Կ., / - Եր.: «Մանմար», 2022:
6. Մանուկյան Ս.Պ., Ընդհանուր մանկավարժագիտություն: Նոր դասընթաց: Ուսումնական ձեռնարկ:-Երկրորդ բարեփոխված հրատարակություն: Եր.: «Զանգակ -97»: 2005:
7. Մովսիսյան Ս. Ա. Սոցիալական միջավայրի դաստիարակչական ազդեցության կառավարումը: Երևան: «Լույս» հրատարակչություն: 1976:
8. Ղույումչյան Գ. Ե. Մանկավարժություն: Գիրք 1: Երևան: «Զանգակ-97» հարտարակչություն: 2005:
9. Леднев В.С., Содержание общего среднего образования. Проблемы структуры /В.С. Леднев.-М.: Педагогика, 1980.
10. Лисина М.И., Обшение, личность и психика ребенка. Под редакцией Рузской А. Г. М.: Институт практической психологи. Воронеж: Модэк. 1997. с. 161.
11. Маслов С.И., Эмоционально-ценностное образование младших школьников /С.И. Маслов.-Тула, Изд-во ТГПУ им. Л.Н. Толстого, 1999.
12. Ожегов С.И., Толковый словарь русского языка /С.И. Ожегов, Н.Ю. Шведова /РАН, Ин-та русского языка им. В.В. Втноградова.-М.: Азбуковник, 1999.